ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1014-Ա « 15 » մարտի 2024 թ.

ՀԱՂԹԱՆԱԿ 18-ՐԴ ՓՈՂՈՑԻ 4-ՐԴ ՆՐԲԱՆՑՔԻ Հ.15 ԵՎ ՀԱՂԹԱՆԱԿ ԹԻՎ 4-3 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԾԵՐ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Արմեն Դեղոյանի դիմումը՝ Հաղթանակ 18-րդ փողոցի 4-րդ նրբանցքի հ.15 (տնամերձ) և Հաղթանակ թիվ 4-3 (վարելահող) հասցեներում գտնվող հողամասի սահմանները ճշտելու և հատակագիծ թողարկելու մասին:

Հարցի քննարկման համար հիմք են հանդիսացել հողի սեփականության իրավունքի 02.08.1993թ. Ա000304 պետական ակտը և ըստ օրենքի ժառանգության իրավունքի 04.04.2019թ. հ.1775 վկայագիրը:

Հարցի ուսումնասիրությունից և տեղագրական հանույթների ճշգրտումից պարզվել է, որ քննարկվող հասցեներում գտնվող հողամասերի փաստացի մակերեսները կազմում են համապատասխանաբար՝ 400.0քմ, որքան ամրագրված է հողի սեփականության իրավունքի 02.08.1993թ. Ա000304 պետական ակտում և 4474.25քմ՝ հողի սեփականության իրավունքի 02.08.1993թ. Ա000304 պետական ակտում ամրագրված 4600.0քմ մակերեսի փոխարեն:

Քննարկվող հողամասերն ընդգրկված չեն հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում և ՀՀ կառավարության 2020թ. հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ հաստատված հավելվածի համաձայն՝ գտնվում են Երևան քաղաքի հողերի տարածագնահատման 9-րդ և 12-րդ գոտիներում:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, հողային օրենսգրքի 52-րդ և 59-րդ հոդվածներով, հաշվի առնելով Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կողմից կազմված հատակագիծ-սխեման և Երևանի քաղաքա-պետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 13.12.2023թ. հ. Դ-152411-23 և 19.02.2024թ. հ.Ն/9148-24 եզրակացությունները.

1. Սահմանել, որ Հաղթանակ 18-րդ փողոցի 4-րդ նրբանցքի հ.15 (տնամերձ) և Հաղթանակ թիվ 4-3 (վարելահող) հասցեներում գտնվող հողամասերի սահմանները որոշվում են 400.0քմ և 4474.25քմ մակերեսների համար սահմանված կարգով հաստատված հատակագծերով:

2. Սույն որոշումից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

3. Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի վրա:

5. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա.Փամբուխչյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ